ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

ԹԵՄԱ *Գնահատում: Ամփոփիչ /միավորային գնահատում, նպատակը, ձևերը, տեսակները ԿԱՊԿՈՒ սովորողի միավորային գնահատման առանձնահատկությունները*

ՀԵՂԻՆԱԿ *Հերմինե Ալավերդյան*

Քննարկվել, հավանության է արժանացել

_____

_____

մեթոդմիավորման _____ նիստում: Արձանագրություն թիվ _____ :

Մեթոդմիավորման նախագահ _____ *Անուշ Դաջունց*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Տնօրենի տեղակալ _____ *Սերգեյ Ավանեսյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Գնահատում: Ամփոփիչ /միավորային գնահատում, նպատակը, ձևերը, տեսակները

ԿԱՊԿՈՒ սովորողի միավորային գնահատման առանձնահատկությունները

ա) Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:

Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումն է:

Հիմք ընդունելով հանրակրթության բովանդակությանը ներկայացվող պահանջները, ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման բարեփոխված մոտեցումները և մեթոդները՝ սովորողների ընթացիկ գնահատման համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները.

1. Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի արձանագրումը, թերությունների բացահայտումն ու շտկումը:
2. հանրակրթության պետական կրթակարգով և միջնակարգ կրթության պետական կրթական չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների յուրացման ընթացքի բացահայտումը, ինչպես նաև դրանց փուլային ստուգումն ու գնահատումը:

Ընթացիկ գնահատման համակարգի հիմքում ընկած են հավաստիության, հիմնավորվածության, հուսալիության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Գնահատումը կարող է լինել օբյեկտիվ կամ սուբյեկտիվ: Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից, օրինակ՝ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը: Գնահատումը սուբյեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական դատողություններից, սկզբունքներից ու վերաբերմունքից: Սուբյեկտիվ են համարվում բանավոր հարցումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները, կամ որոշ գործնական աշխատանքներ:

Ամփոփիչ/միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի: Ա. Էյնշտեյնն ասել է **«Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է»:** Այսպիսով, միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական կարողությունները: Միավորային գնահատման ներկայումս կիրառվող տեսակներն են.

- բանավոր հարցում,
- գործնական աշխատանք,

- թեմատիկ աշխատանք,
- կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Տնային և կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանքների միավորային գնահատումը պարտադիր չէ:

Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել սովորողի գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական:

Սովորողի ուսումնառության արդյունքների միավորային գնահատման ենթակա բանավոր, գրավոր և գործնական աշխատանքների ստուգումից ստացված արդյունքների միավորների բնութագրիչները սահմանված են Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին համապատասխան:

1 միավոր – չի ցուցաբերում ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն:

2 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության հետ չառնչվող տարրական գրագիտություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:

3 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության չափորոշչային նվազագույն պահանջների անբավարար իմացություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:

4 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ կամ պարզ իրադրությունում այն կիրառելու կարողություն, և այդ նյութի վերաբերյալ պարզ առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

5 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, ոչ բարդ հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

6 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան լիարժեք իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար հայտնի մեթոդների իմացություն, միջնորդա-վորված քայլ ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

7 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար միջնորդավորված քայլ կատարելու կարողություն, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

8 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, միջնորդավորված քայլ, պարզ արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք

կատարելու պատրաստվածություն: Կարողանում է ճանաչել տեղեկատվության կազմությունն ու կառուցվածքը, տրոհել այն մասերի և տեսնել այդ մասերի միջև եղած կապերը:

9 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլ, արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար կարողանում է օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել ու վերլուծել ձեռք բերած տեղեկությունը:

10 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն պահանջող, կողմնորոշման և կատարման համար բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, արտածում, հիմնավորում, կռահում ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել, ամփոփել ձեռք բերած գիտելիքն ու տեղեկությունը:

Վերևում նշված 10 միավորային սանդղակը հիմք է հանդիսանում յուրաքանչյուր ուսումնական առարկայի 10 միավորային գնահատման սանդղակի միավորների բնութագրիչների մշակման համար՝ հաշվի առնելով տվյալ ուսումնական առարկայի չափորոշիչը:

բ) Միավորային գնահատում իրականացվում է նաև **ԿԱՊԿՈՒ սովորողների համար**:

2014թ.-ի դեկտեմբերի 2-ին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի մեջ համընդհանուր ներառումն ամրագրվել է որպես պետական քաղաքականություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացը հիմնվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա:

Ներառական կրթությունը համարվում է յուրաքանչյուր սովորողի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն:

Ներառական կրթությունը ենթադրում է բոլոր՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների ներառումը տվյալ դասի ուսումնական նյութի յուրացման գործընթացում:

Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, որն ուսուցչից պահանջում է ճիշտ կազմակերպել ուսումնական գործընթացը՝ կարևորելով սովորողի գնահատումն ընդհանրապես և մասնավորապես ԿԱՊԿՈՒ սովորողի գնահատումը:

Քանի որ ԿԱՊԿՈՒ սովորողները ներառվում են ուսումնական գործընթացում՝ նրանց գնահատումը ևս պետք է իրականացվի առանց խտրականության՝ օգտագործելով միավորային գնահատման համապատասխան տեսակները (կախված ներառման կարիքից) և գնահատման 10

միավորային սանդղակը: Հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ սովորողների առանձնահատկությունները, ուսումնական ձեռքբերումների ստուգման և գնահատման միջոցները հարմարեցվում են նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին: Առաջադրանքները կարելի է կազմել ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր սովորողի համար՝ չափորոշչի նվազագույն պահանջները՝ անհրաժեշտության դեպքում դրանք տրոհելով և հարմարեցնելով այդ սովորողների ընկալման հնարավորություններին: Ամփոփիչ աշխատանքները պետք է հարմարեցվեն ԿԱՊԿՈՒ սովորողի կարիքներին՝ ըստ անհրաժեշտության ապահովելով լրացուցիչ ժամանակ, հանգստանալու ընդմիջումներ: Սովորողը կարող է իր պատասխանը գրի առնել համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցով: Գնահատման և գրանցման համար կիրառելի են

- ստուգաթերթեր (արձանագրում են այս կամ այն հատկանշի առկայությունը կամ բացակայությունը),
- թեստեր, որոնք պարունակում են չափորոշչային նվազագույն պահանջների տրոհված մասերին համապատասխանող առաջադրանքներ:

Գնահատման գործընթացը պետք է պայմաններ ընձեռի սովորողներին իրենց գիտելիքների և ներուժի արտահայտման համար: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ գնահատումն իրականացվի սովորողի համար անմիջական, հանգիստ և բնական պայմաններում: Այն պետք է հնարավորություն ընձեռի սովորողի նկատմամբ արդար վերաբերմունքի դրսևորման համար, հիմնված պետք է լինի հավասարության սկզբունքի և օբյեկտիվ գնահատման հիմքի վրա:

ԿԱՊԿՈՒ սովորողի միավորային գնահատման կիրառման քանակները, կախված տվյալ սովորողի կարիքի առանձնահատկություններից, կարելի է հասցնել թույլատրելի նվազագույն քանակներին:

Ուսուցանող գնահատում, ձևերը և միջոցները

Հայտորոշիչ թեստ (գործնական աշխատանք 1)

ԿԱՊԿՈՒ սովորողի ուսուցանող գնահատման առանձնահատկությունները

ա) Ուսուցանող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթաց է: Հետադարձ կապի կիրառմամբ իրականացվում է ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը: Ուսուցանող գնահատման սկզբունքն է՝«Յուրաքանչյուր սովորող կարող է և պետք է առաջ գնա»:

Ուսուցանող գնահատման մեկ փուլը կարելի է ներկայացնել այսպիսի գծապատկերով.



Ուսուցանող գնահատման ձևեր ու միջոցներ են՝

- հայտորոշիչ թեստ,
- բանավոր հարցում,
- տնային աշխատանք,
- համագործակցային,
- նախագիծ,
- ռեֆերատ կամ ինքնուրույն կատարման ուսումնական այլ առաջադրանք,
- բաց հարցերով քննարկում,
- ինքնագնահատում,
- փոխադարձ գնահատում,
- գործնական աշխատանք, կիրառություն,
- թղթապանակ:

Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է սովորողի վիճակի ճիշտ **հայտորոշմամբ**: Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում սովորողի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Հայտորոշման արդյունքում կիրառվող **հետադարձ կապը** նպաստում է ունեցած տեղեկության հիման վրա սովորողի վիճակի և ուսուցման կազմակերպման բարելավմանը: Այն շարունակական և անընդհատ գործընթաց է: Հետադարձ կապը կարող է լինել բանավոր, գործնական կամ գրավոր աշխատանքների(միավորային և ուսուցանող) արդյունքների քննարկման միջոցով: Սովորողին տրամադրվող հետադարձ կապը պետք է լինի հստակ, հասկանալի, ուղղորդող և ուղղակիորեն կապված լինի իր ուսումնառության հաջորդ քայլերի հետ:

բ) ԿԱՊԿՈՒ սովորողի համար օգտակար և արդյունավետ է ուսուցանող գնահատման կիրառումը, որի դերը մեծ է թ’ե հոգեբանորեն, թ’ե ուսուցման առումով սովորողի զարգացման համար: Այդ նպատակով աստիճանաբար պետք է բարձրացնել ուսուցանող գնահատման դերը որպես ԿԱՊԿՈՒ սովորողի գնահատման նպատակահարմար միջոց:

Ուսուցանող գնահատումը պետք է ճանաչվի որպես կենտրոնական՝ դասարանային պրակտիկայում՝ ինչպես ԿԱՊԿՈՒ, այնպես էլ մյուս սովորողների համար, քանի որ դասարանում ուսուցչի և աշակերտի կատարած աշխատանքի մեծ մասը կարելի է որակավորել որպես գնահատում:

Այն, ինչ ասում և անում են սովորողները, դիտարկվում և մեկնաբանվում է, և ուսումնառության բարելավման վերաբերյալ եզրակացություններ են արվում:

Ուսուցանող գնահատումը պետք է իրականացվի նրբանկատորեն, լինի կառուցողական, քանի որ ցանկացած գնահատում ունի իր հուզակամային ազդեցությունը՝ հատկապես ԿԱՊԿՈՒ սովորողի վրա: Ուսուցիչը պետք է տեղյակ լինի այն ազդեցությանը, որ կարող են ունենալ մեկնաբանությունը, գնահատականը կամ թվանշանը սովորողի ինքնավստահության և խանդավառության վրա և պետք է հնարավորինս կառուցողական լինի իր տրամադրած հետադարձ կապի մեջ: Աշխատանքի և ոչ թե անձի վրա կենտրոնացած մեկնաբանություններն ավելի կառուցողական են և՛ սովորելու, և՛ մոտիվացիայի համար:

Ուսուցանող գնահատումը պետք է հաշվի առնի սովորողի մոտիվացիայի կարևորությունը: Խրախուսող գնահատումը խթանում է մոտիվացիան՝ ավելի շատ շեշտելով առաջընթացն ու հաջողությունները/նվաճումները, քան ձախողումները: Ավելի լավ սովորողների հետ համեմատությունը հազիվ թե դրական շարժառիթ հանդիսանա սովորողների համար: Ուսուցանող գնահատման առանձնահատկությունը, որ դրա միջոցով սովորողն ուրիշների հետ չի համամեմատվում հատկապես կարևոր է դառնում ԿԱՊԿՈՒ սովորողի պարագայում:

Ուսուցանող գնահատումը պետք է նպաստի յուրաքանչյուր սովորողի հնարավորությունների լիարժեք բացահայտմանը և իրենց նվաճումները գնահատելու կարողությունների ձևավորմանը:

գ) Հայտորոշիչ թեստի կազմում

Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման մեջ աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները:

Ուսուցանող գնահատման մի հատուկ տեսակ է հայտորոշիչ թեստը: Դրա նպատակն է՝ որոշել, թե արդյո՞ք սովորողը պատրաստ է շարունակելու հետագա ուսումնառությունը: Հայտորոշիչ թեստի նպատակը ոչ թե ընդհանուր պատկերացումներ ունենալը, կամ աշակերտներին ըստ գիտելիքների խմբերի բաժանելն է, այլ յուրաքանչյուր սովորողի ուժեղ և թույլ կողմերի պարզելը և թերացումները վերացնելու ուղիներ գտնելը:

Թեստ

Թեստի տեսակները և կառուցման սկզբունքները

Թեստը (հարցարանը) որոշակի նպատակով բարեխղճորեն ընտրված առաջադրանքն է կամ առաջադրանքների խումբ, որի նպատակն է հնարավորինս ճիշտ գնահատել սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը:

Թեստ կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար այն նախատեսված է: Առանց նպատակի հստակեցման՝ թեստը հիմնականում վերածվում է առաջադրանքների անհասկանալի մի համախմբի: Նպատակի մասին խոսելիս՝ տեղին է հիշել Սենեկայի «Եթե մարդը չգիտի, թե դեպի որ նավահանգիստն է նավարկում, ապա նրա համար ոչ մի քամի էլ նպաստավոր չէ» ասացվածքը:

Թեստի միջոցով ստուգվում են սովորողի գիտելիքը, կարողությունները, հմտություններն ու արժեքային համակարգը: Թեստի նպատակն է՝ պարզել, թե սովորողը որքանով է յուրացրել ուսումնական նյութը: Արդյունքներն օգտագործվում են միավորային գնահատման կամ հայտորոշման նպատակով:

Ըստ նպատակի թեստը կարող է լինել.

1. ամփոփիչ (առաջադիմության ստուգման) թեստ, որը տրվում է կիսամյակի, կամ յուրաքանչյուր թեմայի վերջում՝ ուսումնական նյութի յուրացման մակարդակը ստուգելու համար,
2. հայտորոշիչ թեստ, որը տրվում է պարբերաբար՝ հայտորոշելու սովորողների թույլ և ուժեղ կողմերը՝ հետագայում ուսուցումը բարելավելու նպատակով,
3. տեղակայման թեստ, որը տրվում է դասընթացի սկզբում՝ սովորողներին տեղակայելու՝ ըստ իրենց գիտելիքի և կարողությունների:

Հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններ են.

- կարճ ժամանակի համար է, արագ է,
- որոշակի է,
- արագ է ստուգվում և արժևորվում,
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,
- սովորողների մեծ մասի համար թեստը մատչելի է,
- արդյունքները հեշտ վերլուծելի են:

Թեստի արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով՝ կարելի է որոշել աշակերտների հետ հետագա անելիքները, ինչպես նաև ուսուցանվող նյութի առավել ընկալելի մեթոդի ընտրությունը:

Թեստերն ազդում են ուսուցման ամբողջ գործընթացի վրա: Այդպիսի ազդեցությունը կոչվում է թեստի հակադարձ ազդեցություն, որը կարող է լինել դրական կամ բացասական: Թեստերի դրական ազդեցությունն ուսուցման վրա գլխավորապես պայմանավորված է ստուգվող նյութի ընտրությամբ: Եթե այն ընդգրկուն է և արտացոլում է իրապես ուսուցանված և սովորողների կողմից ընկալված նյութերը, ապա թեստի ազդեցությունը համարվում է դրական, իսկ եթե թեստը բացասաբար է անդրադառնում ուսուցման վրա, ապա ազդեցությունը բացասական է: Բերենք օրինակ՝ անգլերենից, եթե թեստում գերակշռում է քերականական նյութը և ուշադրություն չի դարձվում հմտությունների ստուգման վրա, ապա ուսուցումը տարվում է միակողմանի: Սրանք այն ընդհանուր բնութագրիչներից են, որ այսօր հատկապես կարևոր են ուսուցիչների և աշակերտների համար:

Թեստ կազմելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ:

- Թեստը պետք է լինի **հուսալի**, **հավաստի և արդյունավետ**: Թեստը համարվում է հուսալի, եթե թեստի արդյունքները գրեթե նույնն են տարբեր օրերին նույն խմբին ստուգելու դեպքում, կամ միաժամանակ երկու համարժեք թեստերի տրամադրման դեպքում ստացվում են գրեթե նույն արդյունքները: Հուսալիությունն ստուգման արդյունքում գրանցված միավորի հարաբերական կայունությունն է:

  Յուրաքանչյուր թեստին կից պետք է մշակվեն գնահատման չափանիշներ: Այդտեղ բացահայտ ներկայացվում են ստուգման կամ ուսումնասիրման համար անհրաժեշտ որակներն ու հարակից պահանջները, որոնք պետք է դրսևորի առաջադրանքները կատարող սովորողը: Կատարված աշխատանքի արդյունքներն ստուգվում են գնահատման կամ հետազոտման և ուսուցանման նպատակով:

  Թեստի արդյունքներն ավելի հուսալի են, եթե այն նախատեսվում է ավելի քիչ ուսումնական որակներ կամ ձեռքբերումներ ստուգելու համար:

  Թեստը պետք է լինի **հավաստի**, այսինքն, ստուգի այն գիտելիքը, կարողությունն ու հմտությունը, որը նախատեսված է ստուգել: Օրինակ՝ լեզուներում, եթե ուզում ենք ստուգել գրելու կամ կարդալու որևէ հմտություն, ապա ընտրված վարժությունը պետք է ստուգի միմիայն այդ հմտությունը: Կարևոր է, որպեսզի հավաստի լինի վարժության տիպը կամ ձևաչափը: Այն պետք է ծանոթ լինի սովորողներին:

  Թեստի հավաստիությունը նպատակին ծառայելն է: Օրինակ, ի՞նչ արժեք կունենան մեր ջանքերը, եթե հասնենք կայարան՝ գնացքի մեկնումից թեկուզև մեկ րոպե ուշացումով:

  Թեստի արժևորման և կատարելագործման համար առավել հիմնարար բնութագրիչ է հավաստիությունը, քանի որ այն իր նշանակությամբ բացարձակ որակ է, որով արժևորվում և որակապես բարելավվում է թեստը:

Թեստի արդյունքում ստացված թվանշաններն ինքնին այնքան հետաքրքրական չեն, որքան դրանց ինչ-որ բնութագրիչներով օժտված լինելը և այն, թե դրանց մեկնաբանություններից ինչ հետևություններ են արվում սովորողների, սովորելու, դասավանդման, կրթակարգի, չափորոշչի և ծրագրերի մասին:

Թեստի կրթակարգային կամ չափորոշչային հավաստիությունը պայմանավորված է նրանով, թե որքանով են չափորոշչային պահանջներն արտահայտված գնահատման մեջ՝ առաջադրանքների միջոցով:

- Թեստը պետք է լինի **իրագործելի** թե՛ մարդկային ռեսուրսների, թե՛ ֆինանսական, թե՛ տեխնիկական, և թե՛ ժամանակի առումներով:
- Թեստը պետք է լինի **արդյունավետ**: Արդյունավետ թեստը ենթադրում է նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով առավելագույն արդյունքի ապահովում: Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որն ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյութը՝ ամփոփ ներկայացված որպես ծրագրային պարտադիր միջուկ: Թեստն արդյունավետ է, եթե բարդության աստիճանը համապատասխանում է թեստավորվողի պատրաստվածության մակարդակին: Համապատասխանել նշանակում է, որ միջին պատրաստվածություն ունեցող սովորողի համար թեստը պետք է ոչ շատ հեշտ և ոչ էլ շատ դժվար լինի: Այն պետք է լինի **միջին բարդության**:

Թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն չափորոշչային բոլոր մակարդակներին համապատասխան առաջադրանքներ, ինչպես նաև համեմատաբար դժվար առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում, բարդ և անծանոթ իրադրություններում կողմնորոշվելու կարողություն, գիտելիքներն ստեղծագործաբար կիրառելու հմտություն:

Այդ աշխատանքները կարող են գնահատվել միավորային տարբեր սանդղակներով, բայց պաշտոնական գրանցման համար դրանք պետք է բերել 10 միավորային սանդղակի (տե՛ս գնահատման մեթոդական ցուցումները):

Թեստում կիրառվող առաջադրանքների տեսակները

Ամփոփիչ թեստ

բ) Թեստը բաղկացած է առաջադրանքներից: Առաջադրանքի պահանջ համարվում են տարբեր հարցադրումները: Կարևոր է, որ առաջադրանքը ձևակերպվի պարզ, հստակ և միանշանակ:

Թեստը կազմելիս անհրաժեշտ է իմանալ, թե ինչն ենք չափում(սովորողի գիտելիքը, կարողությունը, հմտությունը), և ինչ նպատակով ենք չափում: Առաջադրանքների տեսակներն ընտրվում

են նշված պահանջներին համապատասխան: Թեստում ընդգրկված յուրաքանչյուր առաջադրանք պետք է օգնի չափման գործընթացին՝ տարբերակելով սովորողների ունակությունները:

Թեստում կարող են ներառվել առաջադրանքների տարբեր տեսակներ, որոնցից են՝

- պատասխանի ընդարձակ շարադրմամբ,
- ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- կարճ պատասխան պահանջող,
- ապացուցում պահանջող,
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող,
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,
- համապատասխանեցման պահանջով,
- բաց թողածը լրացնելու պահանջով,
- ստեղծագործական մոտեցում պահանջող

  կամ դրանց համադրմամբ:

Բանավոր հարցումը որպես ամփոփիչ/միավորային գնահատման տեսակ

Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ սովորողը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը:

Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- գիտելիքի յուրացում,
- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն,
- ուսումնական գործունեություն ցուցաբերելու (մոդելավորելու) կարողություններ:

Բանավոր հարցումը կարելի է իրականացնել հետևյալ ձևերով.

- առանձին սովորողների՝ տեղում կամ գրատախտակի մոտ հարցման միջոցով,
- սովորողներին ուղղված բանավոր հարցերի միջոցով,
- տնային աշխատանքների ստուգմամբ,
- համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ:

Գործնական աշխատանքը որպես ամփոփիչ/միավորային գնահատման տեսակ

Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական–կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին (ենթադրվում է նաև չափիչ սարքերի կամ համակարգչի կիրառություն): Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ: Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն, նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

1. հարցումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքում և օգտագործում աղյուսակների և գծապատկերների տեսքով,
2. մոդելների, ձևանմուշների և մանրակերտերի (մակետների) պատրաստում,
3. դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում (պաստառներ, ցուցափեղկեր (ստենդներ), տեսաֆիլմեր, էլեկտրոնային ներկայացումներ և այլն),
4. լաբորատոր աշխատանքների կատարում:

Գործնական աշխատանքներ կարող են հանձնարարվել ինչպես տանը, այնպես էլ դպրոցում կատարելու համար:

Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են երկու ձևով: Առաջին՝ սովորողը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Մյուս սովորողները անհրաժեշտության դեպքում կատարում են համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ: Երկրորդ՝ սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր սովորողին տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք: Այս դեպքում նախընտրելի է, որ աշխատանքները կատարվեն դրանց համար նախատեսված առանձին տետրում, որն ուսուցիչն ստուգում և գնահատում է դասի ընթացքում կամ դասերից հետո:

Բանավոր հարցումը որպես ուսուցանող գնահատման միջոց

Ուսուցանող նպատակով բանավոր հարցումն օգնում է ուսուցչին բացահայտելու, թե աշակերտն ինչ գիտի և ինչ կարող է անել: Բանավոր հարցման դեպքում պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

- վերլուծել աշակերտի պատասխաններն ու հարցերը, որպեսզի բացահայտվի, թե ինչ գիտի աշակերտը, ինչպես է հասկանում և ինչ կարող է անել,
- հարցերն օգտագործվեն՝ աշակերտների հատկանշական թերըմբռնումները պարզելու և հետագա ուսուցումը բարելավելու համար,
- աշակերտի հարցերն օգտագործվեն նրա ըմբռնողունակությունը գնահատելու նպատակով:

Այդ նպատակներն իրագործելու համար շատ կարևոր է գտնել և օգտագործել առավել արդյունավետ հարցեր և նպատակին հասնելու ձևեր:

Կարելի է կազմել արդյունավետ հարցադրումների տեսակների աղյուսակ և օգտագործել: Օրինակ՝

- ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ …,
- ի՞նչն է նույնը և ի՞նչն է տարբեր …,
- մի՞շտ է ճիշտ/սխալ, որ …,
- ինչպե՞ս կբացատրեք …,
- ի՞նչն է սխալ …,
- ինչո՞ւ է ճիշտ …, և այլն:

Բանավոր հարցման միջոցով կարելի է պարզել ուսուցանված թեմայի կամ քննարկման ենթակա նյութի տիրապետման աստիճանը: Դա կարելի է անել առանձին աշակերտների հարցմամբ կամ դասարանին ուղղված հարցով: Այդ միջոցներով պարզվում են սովորողների լեզվամտածողությունը, հաղորդակցվելու կարողությունը, տրամաբանությունը և արագ կողմնորոշվելու հատկությունը: Վիճակը ճշտելուց հետո ուսուցիչը պլանավորում է նկատված թերությունները վերացնելու հետագա աշխատանքները: Բանավոր հարցումներն օգտակար են հատկապես ուսումնական նոր նյութն աշակերտներին բացատրելուց հետո:

Աշակերտի ձեռքբերումների ճիշտ արժևորման համար կողմնորոշիչ հարցեր տալուց զատ, շատ կարևոր է աշակերտի պատասխաններն ուշադիր լսելը և դրանց մեկնաբանելն ու վերլուծելը: Երբեմն աշակերտի տված հարցերից կարելի է հետևություններ անել, թե որքանով է նա կարողացել հասկանալ ուսումնական նյութը, ինչն է բնորոշ նրա թերըմբռումներում:

Տնային աշխատանքը որպես ուսուցանող գնահատման միջոց

Սովորելը խթանելու արժեքավոր միջոց է տնային աշխատանքների դերի բարձրացումն ու դրանց նկատմամբ մոտեցումների ճշգրտումն ու համակարգումը: Մեր հանրապետությունում ձևավորված հասարակական, տնտեսական և ընտանեկան կացության պայմաններում աշակերտի կրթության համար տնային աշխատանքին կարևոր դեր է հատկացվում: Դպրոցներն ու կրթության կազմակերպման այլ ձևերը չեն կարող լիարժեք ապահովել դասապրոցեսից հետո սովորողի ուսումնառության շարունակությունը դպրոցում: Աշակերտն իր անհատական կամ համագործակցային աշխատանքները կատարելու է նաև տանը: Ուսուցիչը դասի ընթացքում կամ դրանից դուրս պետք է կարողանա ստուգել և աշակերտի հետ վերլուծել տնային աշխատանքներում աշակերտի ցուցաբերած առաջընթացն ու թերությունները: Տնային հանձնարարությունները պետք է լինեն այնպիսի ծավալի, որ դրանց կատարման համար աշակերտը ծախսի միջին հաշվով շաբաթական ժամաքանակի կեսից ոչ ավելին: Տնային աշխատանքը նպաստում է սովորողի ինքնուրույն և խմբային աշխատանք կատարելու կարողության զարգացմանը: Տնային աշխատանքների ստուգումը, քննարկումն ու վերլուծությունը պետք է արվեն հնարավորինս հաճախ, քանի որ դա կօգնի աշակերտին լավ յուրացնել տվյալ ուսումնական նյութը և հետագայում ինքնուրույն վերացնել ի հայտ եկած թերությունները:

Տնային աշխատանքը կարող է գնահատվել միավորով, եթե այն ստուգվում է բանավոր հարցմամբ և միավորը գրանցվում է որպես բանավոր հարցման գնահատական:

Գործնական աշխատանք և կիրառություն

Աշակերտի ձեռք բերած գիտելիքները հիմնավոր և օգտակար են այնքանով, որքանով նա կարող է դրանք կիրառել: Այդ գիտելիքների կիրառությունների կարողությունը զարգացնելու նպատակով նախատեսվում են գործնական աշխատանքներ: Ելնելով ուսումնական առարկայի առանձնահատկություններից՝ գործնական աշխատանքները կարող են լինել տարբեր՝ տեղանքում կողմնորոշվելու, գործիքներով աշխատելու կարողություն, լաբորատոր պայմաններում փորձ, տեսական կիրառություններ կամ մոդելավորում, մակետների կազմում և նոր տեխնոլոգիաների յուրացում և այլն: Կիրառություններից առանձնահատուկ արժեք ունի միջառարկայական կապերի խթանումը: Այս աշխատանքները կարող են արվել և՝ դասաժամի ընթացքում, և՝ դասից դուրս:

Ուսուցանող գնահատման ուղղությամբ արվող աշխատանքների արդյունավետությունը կարելի է պարզել միավորային ու կիսամյակային ամփոփիչ աշխատանքների արդյունքների հիման վրա, դրանց դինամիկայի և համեմատական վերլուծությունների միջոցով:

Ուսուցանող գնահատման համար կարելի է օգտագործել խրախուսական միջոցներ, բայց առավել կարևոր են մեկնաբանությունները:

Կարճ ժամանակի համար նախատեսված թեստ

Ուսումնական թեմայի փոքր մասերի, ենթաթեմաների կամ հիմնական գաղափարների յուրացման մակարդակն ու խորությունը պարզելու համար նպատակահարմար չէ ամբողջական թեման ստուգող թեստի միջոցով ուսումնասիրությունը: Դրա համար արդյունավետ միջոց են կարճ ժամանակի համար նախատեսվող թեստերը, որոնց առաջադրանքները թեթև են, բայց՝ շատ: Կարճ ժամանակի համար նախատեսվող թեստն ավելի ճկուն է, և դրա արդյունքներն ավելի օբյեկտիվ, հուսալի և արդար են վերլուծությունների համար: Նման թեստերում ընդգրկվող առաջադրանքները հիմնականում լինում են հետևյալ տիպերի՝

- ընտրովի պատասխանով,
- կարճ պատասխանով,
- համապատասխանեցման առաջադրանք,
- բաց թողնվածը լրացնելու առաջադրանք:

Կարճ ժամանակի համար նախատեսվող թեստերի հիմնական առանձնահատկություններն են՝

- տևողությունը,
- հաճախությունը,
- ծրագրային ծավալը՝ պայմանավորված ենթաթեմայի նյութով,
- առաջադրանքների քանակը,
- առաջադրանքների բնույթը:

Այդպիսի թեստեր կազմելու համար անհրաժեշտ են որոշակի հմտություններ և փորձ: Ուսուցիչը դրանք ձեռք բերելու համար պետք է մասնակցի համապատասխան դասընթացների, համագործակցի այլ ուսուցիչների ու մասնագետների հետ և իր աշխատաձևն ու թեստը կատարելագործելու համար կատարի փորձարկումներ:

Կարճաժամկետ թեստը հիմնականում նախատեսվում է ուսուցանող գնահատման համար, բայց անհրաժեշտությունից ելնելով՝ այն կարելի է կիրառել նաև միավորային նպատակով և փոխարինել թեմատիկ գրավոր աշխատանքին (մոտավորապես 30 րոպե) ու գնահատվել միավորով՝ ուսուցչի հայեցողությամբ:

Հայտորոշիչ թեստ (գործնական աշխատանք)

Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է ընթացիկ վիճակի ճիշտ ախտորոշմամբ՝ հայտորոշմամբ: Հայտորոշման դերը բարձր է ոչ միայն ուսումնական աշխատանքներում, այլ նաև ցանկացած աշխատանք որակով անելու դեպքում: Հայտորոշման կարևորությունը մարդիկ հաճախ տեսնում և զգում են՝ հատկապես բժշկության ասպարեզում: Բժշկության մեջ բժշկի գլխավոր խնդիրը հիվանդության ճիշտ ախտորոշումն է, որից հետո, միայն, որոշվում է բուժման ճիշտ ճանապարհը: Ներկա պայմաններում առավել դժվար է հիվանդության ճիշտ ախտորոշումը, քան դրանից հետո բուժումը:

Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման մեջ աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Կախված այն բանից, թե ինչը ինչ ծավալով և խորությամբ է անհրաժեշտ հայտորոշել, կարելի է օգտագործել տարբեր միջոցներ:

Ուսուցանող գնահատման մի հատուկ տեսակ է հայտորոշիչ թեստը: Դրա նպատակն է՝ որոշել, թե արդյո՞ք սովորողը պատրաստ է շարունակելու հետագա ուսումնառությունը: Հայտորոշիչ թեստի նպատակը ոչ թե ընդհանուր պատկերացումներ ունենալը, կամ աշակերտներին ըստ գիտելիքների խմբերի բաժանելն է, այլ յուրաքանչյուր սովորողի ուժեղ և թույլ կողմերի պարզելը: Հայտորոշիչ թեստը կարևոր է թե ուսուցչի և թե աշակերտի համար, քանի որ դրա արդյունքների հիման վրա ուսուցիչը պարզում է իր ուսուցանելու որակն ու արդյունավետությունը, իսկ աշակերտն իր ուսումնառության կարողությունները:

Հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններն են՝

- կարճ ժամանակի համար է նախատեսվում,
- առաջադրանքները ձևակերպվում են պարզ և կարճ,
- արագ է ստուգվում և արժևորվում,
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,
- սովորողների մեծ մասի համար թեստը հեշտ է,
- կատարման համար ժամանակի պակաս չի զգացվում,
- արդյունքները հեշտ վերլուծելի են,
- արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով՝ որոշվում է աշակերտների հետ հետագա անելիքները:

Հայտորոշիչ թեստը չի նախատեսվում օգտագործել հաշվետվության նպատակով, այլ այն ունի սովորողի հետ հետադարձ կապի միջոցով ուսումնական նյութի յուրացման աստիճանը բարձրացնելու նպատակ: Այդ պատճառով հայտորոշիչ թեստի գնահատման մոտեցումներն էապես տարբեր պետք է լինեն մրցակցային բնույթի թեստերի արդյունքների գնահատումից: Հայտորոշիչ թեստի արդյունքները սովորաբար միավորով չեն գնահատվում, դրա արդյունքներն ուսուցիչը վերլուծում, մեկնաբանում և քննարկում է՝ ըստ անհրաժեշտության, յուրաքանչյուր սովորողի հետ: